ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

Մերձավոր Արևելքի երկրներում առկա բախումների ու հակասությունների հետևանքով Սիրիան լքել է ավելի քան երկու միլիոն անձ, այդ թվում՝ սիրիահայեր: Սիրիահայ համայնքը ամենահներից է, ուստի շատ հաճախ այն անվանում են Սփյուռքի մայր համայնք: Վերակազմավորվել է Հայոց ցեղասպանությունից և Կիլիկիայի հայաթափումից հետո: Եվ չնայած սկզբնական փուլի բազմաթիվ դժվարություններին՝ հայ տարագիրները ժամանակի ընթացքում կարողացել են հարմարվել իրենց ընդունող երկրի քաղաքակրթությանը: Հայերի՝ Սիրիայի քաղաքացիություն ստանալը[1] կարևոր նշանակություն ունեցավ սիրիական հասարակությանը ինտեգրվելու համար: Նրանք աստիճանաբար սկսեցին մասնակից դառնալ երկրի քաղաքական, ռազմական, տնտեսական, հասարակական և մշակութային զարգացումներին:

Սիրիայում հայ համայնքի համար ազգային գործունեություն ծավալելու նպաստավոր պայմաններ ստեղծվեցին, երբ իշխանության եկավ Հաֆեզ Ասադը (1971-2000 թթ.): Թե՛ վերջինիս, թե՛ Բաշար Ասադի օրոք հանդուրժողական քաղաքականություն որդեգրվեց փոքրամասնությունների նկատմամբ: Ավելի նպաստավոր պայմաններում շարունակեցին գործել հայկական մարզական և մշակութային տասնյակ միություններ, բարեգործական հաստատություններ ու վարժարաններ:

Հայերի շրջանում ակտիվ գործունեություն են ծավալել նաև ազգային քաղաքական կուսակցությունները՝ Սոցիալ-դեմոկրատ հնչակյան, Ռամկավար ազատական և Հայ հեղափոխական դաշնակցություն, որոնք համայնքային խնդիրները լուծելու նպատակով համագործակցում էին եկեղեցու հետ[2]: Կուսակցությունների միջև որոշակի լարվածությունը 1950-ականներից հետո թուլացել և քաղաքակիրթ ձև է ընդունել: Համակիրների թվով առաջատարը դաշնակցականներն են և ապա՝ հնչակյանները, իսկ ռամկավարները երրորդ տեղում են:

Ընդհանրապես սփյուռքահայ համայնքներն իրականացնում են

---

[1] 1924թ. հունիսի 12-ին Ազգերի լիգան սիրիահայերին տրամադրում է ինքնության վկայագրեր, նույն թվականի ամռանը՝ նաև Սիրիայի քաղաքացիություն (տե՛ս **Ա. Փաշայան, Լ. Հարությունյան,** Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Եր., 2011, էջ 11):

[2] Տե՛ս **Дятлов В., Мелконян Э.** Очерки социокультурной типологии // "Армянская диаспора". Ер., 2009, էջ 112:

հետևյալ հիմնական գործառույթները՝ 1) էթնիկ մշակույթի պահպանում, զարգացում, ամրապնդում, ինչպես նաև հայրենիքի հետ մշակութային կապերի պահպանում, որոնք կազմակերպությունների գործունեության առանցքային խնդիրներն են: 2) էթնիկ խմբի սոցիալական իրավունքների պաշտպանություն, որի իրականացման նպատակով ստեղծված կազմակերպությունները ուշադրություն են դարձնում զբաղվածության, քաղաքական մասնակցության, միգրացիոն խնդիրներին: Սփյուռքահայ համայնքների սոցիալական գործառույթները վերաբերում են ինչպես ընդունող հասարակությունում սեփական էթնոմշակութային միջավայրի ձևավորմանը, այնպես էլ այդ հասարակության հետ բարիդրացիական հարաբերությունների ստեղծմանը: 3) Տնտեսական գործառույթ, որը վերաբերում է ընդունող երկրում տնտեսության որոշակի ոլորտ զբաղեցնելուն, ինչպես նաև հայրենիքում տնտեսության որոշակի ճյուղերում ներդրումներ անելուն: 4) Քաղաքական գործառույթ, որի նպատակն է էթնիկ համայնքի անդամների համար ձեռք բերել լրացուցիչ իրավունքներ և հնարավորություններ: Սփյուռքը կարող է լինել ընդդիմություն ինչպե՛ս հայրենիքի, այնպե՛ս էլ ընդունող պետության տեսանկյունից՝ հիմնելով համապատասխան ինստիտուտներ և կազմակերպություններ: Թեև միջազգային հարաբերություններում այն չի կարող լինել իրավական սուբյեկտ, բայց ի դեմս իր ինստիտուտների և ներկայացուցիչների՝ կարող է ունենալ սեփական գործունեության օրակարգը և քաղաքականություն մշակելով՝ ազդել նաև այս հարցում:

Սույն հոդվածի շրջանակներում կներկայացնենք սիրիահայերի քաղաքական մասնակցության և դիրքորոշումների վերլուծությունը: Սիրիահայ համայնքի տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հարցազրույցների արդյունքների[3] վերլուծությունից ստացել ենք մինչև պատերազմը այնտեղ առկա հասարակական-քաղաքական կյանքի հետևյալ պատկերը:

1. Հայերը Սիրիայում ունեցել են հավասար իրավունքներ, սակայն պետական մարմիններում և կառույցներում նրանց մասնակցությունը սահմանափակ է եղել, մանավանդ՝ իշխանական քաղաքական վերնախավում: Հայերը ներկայացուցիչներ են ունեցել Հալեպի և Լաթաքիայի քաղաքապետարաններում ու նահանգային խորհուրդներում: Նրանց արգելված չի եղել զբաղվել քաղաքականությամբ, սակայն գերադասել են զբաղվել հայապահպանության, գաղութի ներքին հարցերով[4]:

2. Սիրիական պետությունը հայերին մեկ տեղ է հատկացրել խորհրդարանում: Հայ պատգամավորն ընտրվում է մեծամասնական

[3] Տե՛ս **Ա. Փաշայան, Լ. Հարությունյան,** նշվ. աշխ., էջ 39-126:
[4] Տե՛ս նույն տեղը, էջ 47-48:

ցուցակով[5] և համարվում Հայոց Բերիո թեմի առաջնորդարանի թեկնածու:

3. Սիրիահայերը զգալի ազատություններ են ունեցել Հայոց ցեղասպանության հարցերն արծարծելու առումով, սակայն որևէ լուրջ քայլ չեն կատարել՝ գիտակցելով թուրք-սիրիական հարաբերությունների կարևորությունն այս հարցում: 1990-ականներին Սիրիայի և Թուրքիայի լարված հարաբերությունների պատճառով հնարավոր է եղել Հայոց ցեղասպանության և Հայկական հարցի մասին արաբերենով հրատարակել գիտական գրականություն: Սակայն երբ երկկողմ հարաբերությունները կարգավորվել են (1999 թ. Ադանայի պայմանագիրը), արաբերենով հակաթուրքական գրականության լույսընծայումը համարյա անհնար է դարձել: Դրանից հետո Սիրիայում այս հարցերի շուրջ քարոզչական աշխատանքներն իրականացվել են բացառապես հայերենով և միայն հայ համայնքի համեմատաբար նեղ շրջանակներում[6]:

Սիրիահայերն ընդհանուր առմամբ ապաքաղաքական մարդիկ են: Սակայն ներկա իրավիճակում՝ սիրիական իշխանություն-ընդդիմություն առճակատման համատեքստում[7], որի հետևանքով նրանք

---

[5] Նախավերջին խորհրդարանական ընտրությունները տեղի են ունեցել 2007 թ. ապրիլին: Հայ պատգամավորը հայտնի իրավաբան Ս. Սումբուլյանն է Հալեպից: Նա խորհրդարանի արտաքին կապերի հանձնաժողովի անդամ է և հայ-սիրիական բարեկամության պառլամենտական հանձնաժողովի նախագահ (տե՛ս նույն տեղը, էջ 84):

[6] Տե՛ս նույն տեղը, էջ 117:

[7] 2011 թվականի մարտի 15-ին ռազմական հակամարտություն է սկսվում Սիրիայի օրինական իշխանությունների, նրանց սատարող Սիրիայի զինված ուժերի, դաշնակիցների (Հզբոլահ և այլն) և իրենց ընդդիմություն հռչակած Սիրիայի ազատ բանակի (ՍԱԲ), ալ Քաիդայի սիրիական խմբավորումների, Քաթարի, Սաուդյան Արաբիայի, Թուրքիայի, ԱՄՆ-ի ու եվրոպական մի շարք երկրների կողմից ռազմական ու ֆինանսական աջակցություն ստացող ահաբեկչական կազմակերպությունների միջև: ՍԱԲ-ը հիմնականում կազմված է աֆղանական, լիբիական և արաբական այլ երկրներից, անգամ Ադրբեջանից Սիրիա ներթափանցած վարձկաններից, որոնց մի մասն իսլամական ահաբեկչական կազմակերպությունների անդամներ են: Այդտեղ Սիրիայի քաղաքացիները փոքրամասնություն են: Զինյալներին ֆինանսավորում և զինամթերքով ապահովում են գլխավորապես Սաուդյան Արաբիան և Կատարը: Վարձկանները հետախուզական, ռազմական և այլ բնույթի աջակցություն են ստանում նաև ՆԱՏՕ-ի անդամ երկրների (հատկապես ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Թուրքիայի և Ֆրանսիայի) հատուկ ծառայություններից: Իսկ Բաշար Ասադի վարչակազմին ռազմական և նյութական աջակցություն է ցուցաբերում Իրանը: Կառավարական ուժերին ռազմական տեխնիկա և զինամթերք մատակարարում են գլխավորապես Ռուսաստանը, մասամբ՝ Չինաստանը, Հյուսիսային Կորեան: Սիրիան աջակցություն է ստանում նաև որոշ արաբական երկրներից (մասնավորապես՝ Իրաքի շիական կառավարությունից) և շիական կազմակերպություններից: Ընդհանուր առմամբ, ստեղծված իրավիճակում սիրիական պետական և սոցիալ-տնտեսական համակարգը հետևողականորեն կազմալուծվում է: Երկրի գրեթե բոլոր շրջաններում խախտվել է կյանքի բնականոն ընթացքը, կան տասնյակ հազարավոր զոհեր, իսկ փախստականների թիվն օրեցօր ավելանում է:

հայտնվեցին Հայաստանում, սիրիահայերն արդեն քաղաքականապես չեզոք չեն և աջակցում են իշխող վարչակարգին՝ ի դեմս նրա տեսնելով իրենց ազգային գոյության և անվտանգության երաշխիքները: Նրանք համոզված են, որ նախագահի հեռացումը կարող է խարխլել էթնիկ և կրոնական հանդուրժողականության այն կայուն մթնոլորտը, որ ձևավորվել էր Սիրիայում Ասադների իշխանության օրոք: Կարծում ենք, որ հայերն այլ դիրքորոշում չէին կարող որդեգրել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընդդիմադիրներին աջակցում է Թուրքիան, որը շահագրգռված է ոչ միայն Սիրիայում հայերի դիրքերի թուլացմամբ, այլև գործում է միջազգային ասպարեզում Հայոց ցեղասպանության հարցի միջազգային ճանաչման դեմ:

Փաստորեն, Սիրիայում հայերը որդեգրել են իրենց՝ որպես Սփյուռքի մի հատվածի առաջնահերթությունները՝ էթնիկ մշակույթի պահպանում ու զարգացում, սեփական սոցիալ-մշակութային միջավայրի ձևավորում, ընդունող երկրի տնտեսության զարգացման ոլորտում առավելագույն ներդրում և անհրաժեշտության դեպքում քաղաքական դիրքորոշումների հիմնավորված ձևակերպում: Հայտնվելով Հայաստանում՝ նրանք բախվում են այլ իրականության, հետևաբար այլ առաջնահերթությունների ձևակերպման անհրաժեշտություն է առաջանում: Փոխվում են սիրիահայերի ոչ միայն մշակութային կյանքը, սոցիալական կենցաղն ու տնտեսական համակարգը, այլև՝ քաղաքական վիճակը:

Անխուսափելի են դառնում քաղաքական կյանքի նկատմամբ որոշակի դիրքորոշումների ձևավորումը, վարքային մակարդակում դրանց դրսևորումը, մի խոսքով՝ նոր հասարակական-քաղաքական միջավայրին հարմարվելու գործընթացի մեջ մտնելը, որի ժամանակ նրանք կարող են կա՛մ ինտեգրվել, կա՛մ արտամղվել:

Էթնոսոցիոլոգիական հետազոտության շրջանակներում[8] մշակվել են այս գործընթացի ուսումնասիրության որոշակի ցուցանիշներ:

Ըստ քանակական հետազոտության արդյունքների՝ սիրիահայերի կեսից ավելին՝ 62 %, չի հետաքրքրվում Հայաստանի քաղաքական կյանքով, որում գրեթե հավասարաչափ ներգրավվածություն ունեն և՛ արական, և՛ իգական սեռի ներկայացուցիչները (տե՛ս աղյուսակ 1):

---

[8] Էթնոսոցիոլոգիական հետազոտությունն իրականացվել է սոցիոլոգիայում կիրառվող քանակական և որակական մեթոդաբանությամբ՝ 184 ձևայնացված և 36 խորացված հարցազրույցներ սիրիահայ ընտանիքների շրջանում՝ Երևանում և մարզերում 2014 թ. ընթացքում, և փորձագիտական հարցազրույցներ, որոնք անցկացվել են սիրիահայերի խնդիրներով զբաղվող ՀԿ-ների, բարեգործական հիմնադրամների, կրոնական հաստատությունների, ինչպես նաև տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության ներկայացուցիչների, Սփյուռքի նախարարության՝ սիրիահայերի հարցերով զբաղվող աշխատանքային խմբի հետ: Քանակական մեթոդի դեպքում սեռատարիքային կազմի ներկայացուցչությունն ապահովելու համար ընտանիքից պատահականորեն ընտրվել է մեկ հոգի (հարցման օրվան նախորդող ամենամոտ օրը ծնված): Խորին հարցազրույցների դեպքում ընտրության չափանիշներ են սեռը, տարիքը և զբաղվածությունը:

Աղյուսակ 1

Սիրիահայերի՝ ՀՀ քաղաքականությամբ հետաքրքրվածության մակարդակը՝ ըստ սեռի (%)

Պատասխանների տարբերակներ	Սեռ		Ընդամենը
	Արական	Իգական	
Հետաքրքրվում են ՀՀ քաղաքականությամբ	17	21	38
Չեն հետաքրքրվում ՀՀ քաղաքականությամբ	32	30	62
Ընդամենը	49	51	100

Հարցը համադրելով հարցվողների տարիքի հետ՝ կարող ենք փաստել, որ այս առումով ևս ակնհայտ օրինաչափություն չի բացահայտվել, սակայն պետք է արձանագրել որոշակի միտվածություն՝ տարիքի աճին զուգահեռ փոքրանում է քաղաքականությամբ չհետաքրքրվողների թիվը. եթե 18-35 տարեկան սիրիահայերի շրջանում քաղաքականությամբ չհետաքրքրվողները 1.7 անգամ ավելի են, ապա ավագ սերնդի (56 և ավելի) ներկայացուցիչների մեջ՝ 1.5 անգամ:

Հետաքրքիր ցուցանիշ է նկատվում հարցը սիրիահայերի՝ Հայաստանում ապրելու ժամանակահատվածի հետ համադրելու դեպքում (տե՛ս աղյուսակ 2): Հայաստանի քաղաքական կյանքը առավելագույնս ակտիվ վիճակում է պահում առաջին տարում ժամանողներին (50 %): Այնուհետև կիսով չափ (24 %) նվազում է նրանց հետաքրքրվածության մակարդակը՝ պայմանավորված նոր միջավայրում իրենց կենսագործունեության համար այլ առաջնահերթություններով՝ աշխատանք, կենցաղային խնդիրներ, ինչպես նաև՝ ըստ անհրաժեշտության կրթական և առողջապահական հարցերի կարգավորում: Ավելի վաղ եկողներն արդեն, փոքրիշատե հաղթահարելով նշված պատնեշները, սկսում են հետաքրքրություն ցուցաբերել իրենց ընդունող երկրի քաղաքական համակարգի նկատմամբ՝ փորձելով գտնել դրա դրական և բացասական կողմերը:

Աղյուսակ 2

Սիրիահայերի՝ ՀՀ քաղաքականությամբ հետաքրքրվածության մակարդակը՝ ըստ Հայաստան ժամանելու տարեթվի (%)

Պատասխանների տարբերակներ	Տեղափոխվել են Հայաստան			Միջին ցուցանիշ
	2012 թ.	2013 թ.	2014 թ.	
Հետաքրքրվում են ՀՀ քաղաքականությամբ	39	24	50	38
Չեն հետաքրքրվում ՀՀ քաղաքականությամբ	61	76	50	62
Ընդամենը	100	100	100	100

Հետագայում սիրիահայերը, վարքային մակարդակում հնարավորություն ունենալով արտահայտելու իրենց վերաբերմունքը քաղաքական գործընթացների նկատմամբ, քաղաքական ակտիվություն չեն դրսևորում (տե՛ս աղյուսակ 3): Համազգային վերջին ընտրությունների ժամանակ, թեև նրանց մոտ 2/3-ը (68 %) կա՛մ հնարավորություն չի ունեցել մասնակցելու ընտրություններին՝ ՀՀ քաղաքացիություն չունենալու պատճառով, կա՛մ դեռևս մուտք չի գործել Հայաստան, այնուամենայնիվ իրական ընտրողների (32 %) կեսից ավելին (20 %) չի մասնակցել ընտրություններին: Այս զանգվածի մեջ, ինչպես տեսնում ենք, գերակշռում են իգական սեռի ներկայացուցիչները (17 %):

Աղյուսակ 3

Սիրիահայերի մասնակցությունը ՀՀ համազգային վերջին ընտրություններին՝ ըստ սեռի (%)

Պատասխանների տարբերակներ	Սեռ		Ընդամենը
	Արական	Իգական	
Այո	4	8	12
Ոչ	3	17	20
ՀՀ քաղաքացիություն չի ունեցել	16	13	29
ՀՀ-ում չի եղել	25	14	39
Ընդամենը	48	52	100

Ընտրություններին մասնակցության հարցը համադրելով զբաղվածության ցուցանիշի հետ՝ տեսնում ենք, որ այն ևս նշանակալի ազդեցություն ունի սիրիահայերի քաղաքական ակտիվության վրա: Տնտեսապես ոչ ակտիվ զանգվածը, որի մեջ մտնում են գործազուրկները, տնային տնտեսուհիներն ու թոշակառուները, նաև քաղաքականապես է ոչ ակտիվ. ընտրություններին չմասնակցողների մեջ նրանք գրեթե երկու անգամ ավելի են (13 %), քան տնտեսապես ակտիվ զանգվածը (7 %), որում ներառված են տարբեր ոլորտներում աշխատող սիրիահայերը, ինքնազբաղվածներն ու ուսանողները:

Երկար ժամանակ որևէ միության անդամակցելը դադարեցնելով՝ օտար միջավայրում խմբի կենսագործունեությունը ենթարկվում է որոշակի փոփոխությունների: Սիրիայի հայ համայնքում միջավայրային գործոնը կարևոր դեր է կատարել՝ ձեռք բերելով ֆորմալ կառուցվածք: Դրա վկայությունն են համայնքում առկա տարատեսակ միություններն ու համայնքային կառույցները, որոնք հաճախ ձևավորվել են կուսակցական գործունեությանը զուգահեռ:

Նման երևույթը չի կարող իր ազդեցությունը չթողնել Հայաստան ներգաղթած հայերի վարքագծի վրա, առավել ևս, որ նոր միջավայրում բախվելով նոր խնդիրների՝ քաղաքական և հասարակական կառույցներում ներգրավվելու հարցը դառնում է ավելի կարևոր և արդիական: Այս առումով Հայաստանում ունենք հետևյալ պատկերը (տե՛ս աղյու-

սակ 4). սիրիահայերի 14 %-ը կուսակցական պատկանելություն ունի, ընդ որում՝ պատկանելիությունը ենթադրում է ինչպես Սիրիայում, այնպես էլ Հայաստանում ֆորմալ անդամակցություն այս կամ այն կուսակցությանը:

Աղյուսակ 4

Սիրիահայերի կուսակցական, հասարակական, քաղաքացիական ակտիվությունը՝ ըստ սեռի (%)

Ակտիվության ձևեր	Պատասխանների տարբերակներ		Ընդամենը	Սեռ		Ընդամենը՝ ակտիվ զանգված
	Այո	Ոչ		Արական	Իգական	
Կուսակցական պատկանելություն	14	86	100	10	4	14
Հասարակական կառույցի անդամակցություն	8	92	100	7	1	8
Քաղաքացիական ակտիվություն (ցույցեր, նախաձեռնություններ)	5	95	100	4	1	5

Ինչպես տեսնում ենք, սիրիահայերի շրջանում որևէ կուսակցության անդամակցելու հարցը սերտորեն պայմանավորված է սեռային պատկանելությամբ: Ըստ աղյուսակ 4-ի տվյալների՝ 14 %-ի մեջ 2/3-ից ավելին արական սեռի ներկայացուցիչներն են: Փաստորեն սիրիահայ համայնքում ևս քաղաքական դաշտում կանանց ներգրավվածությունը եթե չի արգելվում, ապա չի էլ խրախուսվում: Նույն միտումը կարող ենք արձանագրել նաև քաղաքացիական ակտիվության, ցույցերի, հասարակական նախաձեռնությունների պարագայում՝ ակտիվ է հարյուրից յուրաքանչյուր հինգերորդը (5 %), իսկ այս թվի մեջ տղամարդիկ չորս անգամ ավել են կանանց համեմատ: Հասարակական կառույցներին անդամակցելու հարցում ևս տեսնում ենք սիրիահայ տղամարդկանց գերակա դերը՝ 7/1 համամասնությամբ:

Այս տվյալները թույլ են տալիս խոսել այն մասին, որ կանայք արտամղված են հասարակական և քաղաքական կյանքից: Թեպետ դրանք Հայաստանում անցկացված հետազոտությունից են, սակայն Սիրիայում ևս, որտեղ հայ համայնքում ընդունված չէ կնոջ՝ տնից դուրս աշխատելը[9], հասարակական-քաղաքական գործունեությամբ զբաղվելը՝ մեծ մասամբ պայմանավորված էթնիկ և կրոնական այլ միջավայրում ապրելու հանգամանքով:

Կուսակցական պատկանելության հարցը քննարկել ենք մի քանի ցուցիչների հետ կապի մեջ՝ փորձելով պարզել՝ արդյո՞ք այն որևէ դերակատարություն ունի սիրիահայերի հետագա գործողությունների

[9] Տե՛ս **Акопян Г.** Роль трудоустройства при адаптации сирийских армян в Армении (социологическое исследование) // "Диаспоры". М., 2015, էջ 175:

մեջ հասարակական և քաղաքական ակտիվության համատեքստում (տե՛ս աղյուսակ 5):

Աղյուսակ 5

Քաղաքական կուսակցության պատկանող սիրիահայի ակտիվությունը (%)

Պատասխանների տարբերակներ	Հետաքրքրվածություն ՀՀ քաղաքականությամբ	Ընտրություններին մասնակցություն	Քաղաքացիական ակտիվություն (ցույցեր, նախաձեռնություններ)	Հասարակական կառույցի անդամակցում
Այո	54	50	31	23
Ոչ	46	50	69	77
Ընդամենը	100	100	100	100

Այն, ինչ հնարավոր էր ենթադրել, հաստատվում է քանակական հետազոտությամբ, այն է՝ կուսակցական պատկանելիություն ունեցող անձանց մեջ ՀՀ քաղաքականությամբ ավելի շատ հետաքրքրվող (54 %), քան չհետաքրքրվող (46 %), սիրիահայեր: Ինչպես տեսնում ենք, միևնույն ժամանակ բավականին մեծաթիվ է կուսակցական, բայց ՀՀ քաղաքականության նկատմամբ անտարբեր զանգվածը: Հիմնական պատճառն այն է, որ Սիրիայում կուսակցությունները մեծ մասամբ ազգապահպանության գործառույթներ են իրականացրել՝ իրենց շուրջը ձևավորված ներհամայնքային կառույցներով, ի տարբերություն Հայաստանի, որտեղ դրանք կարևոր դերակատարում ունեն քաղաքական գործընթացներում՝ երկրի իշխանության համար պայքարելու, այն իրականացնելու և վերահսկելու գործառույթներում: Այդ փաստն էլ հենց շատ սիրիահայերի համար քաղաքական անտարբերության պատճառ է դառնում:

Ընտրությունների մասնակցության հարցում (չեն հաշվարկվել ՀՀ քաղաքացիություն չունեցող և տվյալ ժամանակաշրջանում երկրից բացակայողները) ստացել ենք հավասար զանգվածներ. կուսակցական պատկանելություն ունեցող սիրիահայերի ուղիղ կեսն է մասնակցել ՀՀ համազգային ընտրություններին: Սակայն այս առումով ևս կարող ենք արձանագրել սիրիահայերի՝ քաղաքական գործընթացների նկատմամբ անտարբերության մասին, քանզի, ըստ ՀՀ-ում ձևավորված քաղաքական մշակույթի, կուսակցություններին անդամակցությունը ենթադրում է առավելագույն մասնակցություն երկրում տեղի ունեցող ցանկացած մակարդակի ընտրություններին:

Քաղաքացիական ակտիվության և հասարակական կառույցներին անդամակցության պարագայում կարող ենք նկատել, որ նվազում է կուսակցության անդամ սիրիահայերի ակտիվությունը՝ առաջին դեպքում հասնելով մոտ մեկ երրորդ (31 %), իսկ երկրորդ դեպքում՝ մոտ

մեկ չորրորդ (23 %) հարաբերակցության: Տվյալներից ելնելով՝ կարող ենք փաստել, որ քաղաքական կուսակցության պատկանելությունը չի ենթադրում հասարակական կառույցներին անդամակցություն, առավել ևս քաղաքացիական նախաձեռնության կամ ցույցի պարտադիր մասնակցություն:

Այսպիսով, հայերը Սիրիայի քաղաքական կյանքում պասիվ դերակատարություն են ունեցել՝ պայմանավորված նրանց՝ որպես Սփյուռքի կարևոր զանգվածի գործառության առաջնահերթություններով՝ ազգապահպանություն, սոցիալական և տնտեսական կյանքին մասնակցություն: Տեղափոխվելով Հայաստան և հայտնվելով այլ հասարակական-քաղաքական միջավայրում՝ նրանք կանգնած են այդ միջավայրին հարմարվելու անհրաժեշտության առջև, այլապես քաղաքական հետաքրքրվածության պակասը, հասարակական-քաղաքական գործընթացներին չմասնակցելու միտվածությունը զրկում են նրանց ՀՀ լիիրավ քաղաքացիներ լինելու և զգալու հնարավորությունից:

Բանալի բառեր – *սփյուռքահայ համայնք, սիրիահայեր, քաղաքական մասնակցություն, քաղաքացիական ակտիվություն, հասարակական ներգրավվածություն*

ГАЯНЕ АКОПЯН – ***Особенности политического участия сирийских армян в РА.*** – В политической жизни Сирии, в отличие от жизни социальной и экономической, тамошние армяне играли пассивную роль, что обусловливалось их приоритетом как важной части диаспоры – этническим самосохранением. Переехав в Армению и оказавшись в иной общественно-политической среде, они встали перед необходимостью адаптироваться к ней, в противном случае отсутствие либо недостаток интереса к политике и неучастие в общественно-политических процессах помешают им стать полноценными гражданами Армении.

Ключевые слова: *армянская диаспора, сирийские армяне, политическое участие, гражданская активность, социальная вовлеченность*

GAYANE HAKOBYAN – ***The Peculiarities of Political Participation of Syrian Armenians in RA.*** – Syrian Armenians had a passive role in the political life of Syria, as they were an important part of Armenian Diaspora and had responsibilities related to special functions, priorities, ethnic preservation, participation in social and economic life. Moving to Armenia and appearing in other social and political environment, they are standing in front of the adaptation of that environment, otherwise, the lack of political interest and their intention not to participate in the socio-political processes deprived them of being and feeling Armenian citizens.

Key words: *Armenian Diaspora, Syrian Armenians, political participation, civic activity, social involvement*